ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՔԵՐՈՎԲԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

(1900—1969)



Սույն թվականի հոկտեմբերի 22-ին Էջմիածին քաղաքում վախճանվեց արժանապատիվ տ. Քերովբե ավագ քահանա Շահբազյանը:

Արժ. տ. Քերովբե ավագ քհն. Շահբազյանը ծնվել է 1900 թվականին Սպահանի շրջանի Սնգիրդ գյուղում (Իրան), հողագործի ընտանիքում:

Սկզբնական կրթությունը ստանում է իր ծննդավայրում, ապա աշակերտում Մկրտիչ վարժապետին և տ. Պարույր քահանային: 1917 թվականից մինչև 1937 թվականը հանգուցյալը աշխատել է Սելբարդ գյուղի դրպրոցում որպես ուսուցիչ: 1937 թվականին մեկնում է Սպահանի շրջանի Նոր Ջուղա գյուղը և տեղի ս. Սարգիս եկեղեցում կատարում լուսարարի պաշտոն: 1945 թվականին տեղի Ամենափրկիչ եկեղեցում տ. Վահան եպս. Կոստանյանի կողմից ձեռնադրվում է քահանա և պաշտոնավարում՝ Սելբարդ գյուղի ս. Հակոբ եկեղեցում:

1946 թվականին տեր հայրը իր ընտանիքով ներգաղթում է հայրենիք և մշտական բնակություն հաստատում Էջմիածին քաղաքում: Նա պաշտոնավարում է ս. Հռիփսիմե, ապա քաղաքամիջի ս. Աստվածածին եկեղեցիներում:

1959 թվականին հանգուցյալը իր բարեխիղճ և նվիրյալ գործունեության համար Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից պարգևատրվում է լանջախաչով:

1964 թվականին, իր երկարամյա և անբասիր գործունեության համար, արժանանում է ավագ քահանայության պատվի:

1969 թվականի հոկտեմբերի 23-ին, ուրբաթ օրը, ս. Աստվածածին եկեղեցում արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը մատուցում է հոգեհանգստյան ս. պատարագ: Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը կատարում է հանգուցյալի վերջին օծումը և իր դամբանականի մեջ նշում տ. Քերովբե քահանայի կատարած հոգևոր ծառայությունը իր հավատացյալ ժողովրդի ծոցում:

Արդարև, հանգուցյալը բարի, հավատավոր, հայ եկեղեցու կարգ ու կանոնին նախանձախնդիր հոգևորական էր, որ բարի հիշատակ է թողել:

Հանգիստ իր ոսկորներին:

ՀԱՅԿ ԳՐՍՏԻՐՈՍՅԱՆՑ
ԱՆՆ ԿԱՆ
ԳՐԱԴ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ